ՀԿԴ/0080/02/23
ԵԴ/30903/02/21

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 ապրիլի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ ՀՀ պաշտպանության նախարարության ընդդեմ Նարեկ Վարդանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ՀԿԴ0080/02/23 (ԵԴ/30903/02/21) քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 7-ի որոշումը,

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.**

1. ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Հայցվոր) 2021 թվականի հուլիսի 14-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Նարեկ Վարդանյանի (այսուհետ՝ նաև Պատասխանող)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի հունվարի 25-ի որոշմամբ քաղաքացիական գործը հանձնվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

3. 2023 թվականի ապրիլի 3-ին թիվ ԵԴ/30903/02/21 քաղաքացիական գործը ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, որին շնորհվել է ՀԿԴ/0080/02/23 համարը:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի ապրիլի 10-ին:

**<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>**

5. Հղում կատարելով 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3.1-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հունվարի 25-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) [Տ]վյալ դեպքում, ուսումնասիրելով թիվ ԵԴ/30903/02/21 գործով ներկայացված պահանջը, Դատարանն արձանագրում է, որ այն իրենից ներկայացնում է գույքային պահանջ, իսկ գործով հայցվոր է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարությունը, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված պահանջի քննությունն անխուսափելիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության գույքային շահերին, ուստի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում*

*լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 24-րդ մասով, (…) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3.1 կետով սահմանված կարգավորումների հիմքով թիվ ԵԴ/30903/02/21 քաղաքացիական գործը պետք է հանձնել հակակոռուպցիոն դատարանի քննությանը»*[1]*:*

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունված և 2023 թվականի հունվարի 7-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-575-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Հակակոռուպցիոն դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) [Օ]րենսդիրը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին օժտելով մասնագիտացված դատարանի կարգավիճակով, նախատեսել է այն քաղաքացիաիրավական վեճերի շրջանակը, որոնց քննությունը և լուծումը կարող են իրականացվել միայն այս դատարանի կողմից: Որպես այդպիսին դիտարկվել են դատախազի կողմից հարուցված պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը: Այսինքն, օրինսդիրն առանձնացրել է երկու տիպի քաղաքացիաիրավական վեճեր, որոնք կարող են դիտարկվել որպես հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր, և որոնց լուծումը կարող է իրականացվել բացառապես ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից:*

*(…) Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական դատավարության կարգով հարուցված հայցը կարող է որակվել որպես հակակոռուպցիոն քաղաքացիական գործ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝*

*ա) պետք է ներկայացված լինի պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայց, և*

*բ) հայցը պետք է հարուցված լինի դատախազի կողմից:*

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 114-115:

*(…) [Դ]ատարանը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ֆիզիկական անձի դեմ ներկայացված գումարի բռնագանձման հայցապահանջը ենթակա չէ քննության ՀՀ հակակոռուպցիոն դատարանում:*

*(…) [Դ]ատարանը գտնում է, որ բացակայել է թիվ ԵԴ/30903/02/21 գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին հանձնելու ենթակայության նախապայմանը, քանի որ գործով ներկայացված չէ դատախազի կողմից հարուցված պետության գույքային շահի պաշտպանության վերաբերյալ հայց»*[2]*:*

**<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.**

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0080/02/23 (ԵԴ/30903/02/21) քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ պաշտպանության նախարարության ընդդեմ Նարեկ Վարդանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ (…) հակակոռուպցիոն դատարանը»:*

2021 թվականի ապրիլի 14-ին լրացված և մինչև 2023 թվականի հունվարի 7-ը գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (…) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (…)»:*

2022 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունված և 2023 թվականի հունվարի 7-ին ուժի մեջ մտած՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-575-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է

[2] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 122-124:

և գործում է հետևյալ խմբագրությամբ. *«Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (…) դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (…)»:*

9. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում հստակեցվել է հակակոռուպցիոն դատարանին ենթակա քաղաքացիական գործերի շրջանակը՝ սահմանելով, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ենթակա են **բացառապես ՀՀ դատախազության կողմից հարուցված՝** քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը: Այսինքն՝ հակակոռուպցիոն դատարանի ենթակայական իրավազորությունը սահմանափակված է միայն **դատախազի կողմից հարուցված պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերի** քննությամբ:

10. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021 թվականի հուլիսի 14-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Նարեկ Վարդանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին[3], որը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[4],

- հղում կատարելով 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3.1-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հունվարի 25-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ սույն գործով ներկայացված պահանջի քննությունն անխուսափելիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության գույքային շահերին, ուստի նշված քաղաքացիական գործը պետք է հանձնել ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը[5],

- հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունված և 2023 թվականի հունվարի 7-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-575-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ Հակակառուպցիոն դատարանին են ենթակա բացառապես դատախազի կողմից հարուցված՝ պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերը[6]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է փաստել, որ սույն գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության և ոչ թե դատախազության կողմից: Այսինքն՝ տվյալ դեպքում ապահովված չէ օրենսդրի կողմից սահմանած՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից գործերի քննության անհրաժեշտ նախապայմանը:

12. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0080/02/23 (ԵԴ/30903/02/21) քաղաքացիական գործը՝ ըստ հայցի ՀՀ պաշտպանության նախարարության ընդդեմ Նարեկ Վարդանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

---

[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

13. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՀԿԴ/0080/02/23 (ԵԴ/30903/02/21) քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

թիվ ՀԿԴ/0080/02/23 (ԵԴ/30903/02/21) քաղաքացիական գործն ըստ հայցի՝ ՀՀ պաշտպանության նախարարության ընդդեմ Նարեկ Վարդանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

**ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**